



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Ուսուցչի կողմից սովորողների՝
ուսուցման և դաստիարակության պլանավորումը՝
հանրակրթական պետական և առարկայական չափորոշիչներին
համապատասխան*

Առարկան՝ *Տեխնոլոգիա*

Հետազոտող ուսուցիչ՝ *Հարությունյան Օլյա*

Ուսումնական հաստատություն՝ *Դիմիտրովի միջնակարգ դպրոց*

Երևան 2022

Բովանդակություն

<i>1. Ներածություն.....</i>	<i>3</i>
<i>2. Տեխնոլոգիա առարկայի ուսուցման նպատակն ըստ կրթական աստիճանների.....</i>	<i>4</i>
<i>ա) տարրական դպրոցում</i>	
<i>բ) միջին դպրոցում</i>	
<i>3. <<Տեխնոլոգիա>> առարկայի խնդիրները.....</i>	<i>6</i>
<i>4. Առարկայի բովանդակությունը `.....</i>	<i>7</i>
<i>ա) տարրական դպրոցում (1-4-րդ դասարան)</i>	
<i>բ) միջին դպրոցում (5-7-րդ դասարան)</i>	
<i>5. Արժեքային համակարգ</i>	<i>9</i>
<i>ա) տարրական դպրոց</i>	
<i>բ) միջին դպրոց</i>	
<i>6. Պլանավորում.....</i>	<i>10</i>
<i>7. Դասի կառուցվածքը.....</i>	<i>12</i>
<i>8. Գնահատում.....</i>	<i>17</i>
<i>9. Առաձևեր, ասացվածքներ և ասույթներ.....</i>	<i>18</i>
<i>10. Առարկայի բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները.....</i>	<i>19</i>
<i>11. Առարկայի ուսուցման վերջնարդյունքները.....</i>	<i>25</i>
<i>12. Ձեռնարկատիրական կրթություն.....</i>	<i>27</i>
<i>12. Եզրակացություն.....</i>	<i>28</i>
<i>13. Գրականություն.....</i>	<i>29</i>

Ներածություն

Տեխնոլոգիան գիտելիքների, հմտությունների, արժեքների և վերաբերմունքի նպատակային կիրառումն է մարդկային կարիքներն ու ցանկությունները բավարարող ապրանքներ կամ համակարգեր ստեղծելու համար:

<<Տեխնոլոգիա>> ուսումնական առարկայի նպատակը ստեղծարար, նորարար, նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումն է, ով արվեստին ու արհեստին հաղորդակցվելու, աշխատանքի պրակտիկ ձևերին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու միջոցով ստեղծում է մարդկային կարիքներին ու ցանկություններին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր: Այն տեխնոլոգիական միջավայրի և արտադրական գործընթացների նկարագրությանը, գաղափարները գործողության վերածելու հմտությունների ձևավորմանը միտված շարունակական գործընթաց է, որի նպատակը մարդու բարեկեցությունն է:

Նախաձեռնողականության և ստեղծարարության տեխնոլոգիական մոտեցումն իբրև համընդհանուր ալգորիթմ որոշում է ուսումնական առարկայի նպատակը: Տեխնոլոգիա առարկան նպաստում է շուկայական տնտեսության պայմաններում սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորում է բազմակողմանի և ներդաշնակ զարգացած անձ, նախապատրաստում է նրան ինքնուրույն կյանքին:

<<Տեխնոլոգիա>> առարկայի ուսուցման նպատակն ըստ կրթական աստիճանների

Առարկայի ուսուցումը նպատակաուղղված է «Հանրակրթության պետական չափորոշիչ» փաստաթղթով սահմանված հետևյալ վերջնարդյունքների ձևավորմանը՝

տարրական դպրոցում՝

- 1) հասկանա իր առջև դրված խնդիրը, մշակի և կատարի քայլեր այն լուծելու համար,
- 2) դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին,
- 3) համատեղ կամ ինքնուրույն իրականացնի պարզ ուսումնասիրություններ, կատարի առաջադրանքներ, անի պարզ եզրակացություններ և ներկայացնի ստացված արդյունքները,
- 4) տարբերակի և կիրառի բնական ռեսուրսները խնայելու, մարդու կողմից շրջակա միջավայրը պահպանելու և բարելավելու ձևերը, մասնակցի բնապահպանական պարզ միջոցառումների,
- 5) իմանա, որ շրջապատող աշխարհի ճանաչողության եղանակներից մեկը գիտությունն է, ներկայացնի մարդու և բնության վրա գիտության որոշ ձեռքբերումների ազդեցությունը,
- 6) ունենա գիտելիքներ և հմտություններ օբյեկտները չափելու, հաշվելու, համեմատելու, նկարագրելու, դրանց քանակական, որակական և տարածական պարզ հարաբերակցությունները գնահատելու համար,
- 7) ճանաչի և պատկերի որոշ երկրաչափական պատկերներ, ունենա պարզ տարածական պատկերացում,
- 8) պատկերացում ունենա ձեռնարկատիրական գործունեության կարևորության մասին, բերի պարզ օրինակներ,
- 9) դրսևորի տարրական աշխատանքային հմտություններ, անվտանգ կերպով օգտվի կենցաղային սարքերից, աշխատանքային որոշ գործիքներից և նյութերից,
- 10) գտնի իր սխալները և ձգտի դրանք ուղղել ինքնուրույն կամ աջակցությամբ,
- 11) օգտվի որոշ թվային սարքերից, համակարգչային ծրագրերից, հավելվածներից, կարողանա օգտագործել դրանց անվտանգ կիրառելու կանոնները,
- 12) պատկերացում ունենա տեղեկատվության աղբյուրների ու միջոցների բազմազանության մասին,
- 13) գիտակցի իր ընտանեկան, ազգային, քաղաքացիական պատկանելիությունը,
- 14) ճանաչի իր հայրենիքը, ունենա նախնական գիտելիքներ Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի մասին,
- 15) ցուցաբերի այլ ազգերի, ավանդույթների, արժեքների նկատմամբ հետաքրքրություն և հարգանք,
- 16) պահպանի սեփական մարմնի խնամքի, հիգիենայի և անվտանգ վարքագծի կանոնները, գիտակցի առողջ և բալանսավորված սնվելու անհրաժեշտությունը,
- 17) ճանաչի և խուսափի վնասակար սովորություններից, բացատրի դրանց հետևանքները,
- 18) ծանոթ լինի տարբեր մասնագիտությունների և զբաղմունքների, ըստ մասնագիտության աշխատանքային գործիքներին և գործառույթներին,
- 19) իմանա մասնագիտությունների կարևորության, մարդու կյանքում աշխատանքի դերի մասին:

Միջին դպրոցում՝

- 1) իրականացնի չափումներ, կատարի մոտավոր ու ճշգրիտ հաշվարկներ և գնահատի արդյունքները՝ ընտրելով և օգտագործելով համապատասխան հասկացություններ, սկզբունքներ, նյութեր և սարքավորումներ.
- 2) կիրառի երկրաչափական պատկերների և մարմինների մասին գիտելիքներն ամենօրյա կյանքում և հարակից ուսումնական առարկաներն ուսումնասիրելիս.
- 3) վերլուծի, գնահատի և առաջարկի դասակարգման, տարբերակման կամ խմբավորման չափանիշներ՝ ելնելով խնդրի պահանջից.
- 4) ներկայացնի գիտության նվաճումների, տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցությունը բնության, մարդու և հասարակության վրա.
- 5) տարբերի ձեռնարկատիրական գործունեության տեսակները և իրականացման ձևերը, նկարագրի կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը և սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը բիզնես գործունեության մեջ.
- 6) գնահատի իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները, վերլուծի պատճառահետևանքային կապերը և կայացնի որոշումներ.
- 7) դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր.
- 8) ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ.
- 9) գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ.
- 10) արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը.
- 11) արդյունավետ կազմակերպի իր ուսումնական գործընթացը և ավարտի աշխատանքները առանց անմիջական վերահսկողության, կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ.
- 12) ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ.
- 13) դրսևորի աշխատանքային հմտություններ, կարողանա հմուտ և անվտանգ օգտագործել տարբեր սարքեր, գործիքներ և նյութեր.
- 14) Կարողանա բացահայտել և զարգացնել իր անհատական առանձնահատկությունները, հետաքրքրություններն ու նախասիրությունները.
- 15) Կարողանա կատարել նախնական ինքնորոշում՝ հիմնվելով մասնագիտական կրթության հնարավորությունների վրա:

<<Տեխնոլոգիա>> առարկայի խնդիրները

1. Տեխնոլոգիական և աշխատանքային կուլտուրայի ձևավորում, աշխատասիրության դաստիարակում:
2. Տեխնոլոգիական գիտելիքների, գործնական և անվտանգ աշխատանքի ունակությունների ձևավորում:
3. Գրաֆիկական ունակությունների և կուլտուրայի ձևավորում:
4. Նախագծային, կոնստրուկտորական և դեկորատիվ-կիրառական գործունեության ձևավորում:
5. Մասնագիտական կողմնորոշման ունակությունների ձևավորում:

2. Առարկայի բովանդակությունը

Հանրակրթության պետական չափորոշչով «Տեխնոլոգիա» առարկան որպես պարտադիր առարկա ուսումնասիրվում է 1-7-րդ դասարաններում:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը տարրական դպրոցում ուղղված է նախնական աշխատանքային հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, նյութերից, կենցաղային սարքերից, աշխատանքային գործիքներից և սարքավորումներից անվտանգ օգտվելու հմտությունների ձևավորմանը: Այն նպատակաուղղված է ընդլայնելու սովորողների գիտելիքները տարբեր նյութերի հատկությունների, աշխատանքային գործիքների գործառնությունների, մարդու կյանքում աշխատանքի դերի, կարևորության, տարբեր մասնագիտությունների մասին, տիրապետելու նյութերի մշակման եղանակներին, գործիքներն անվտանգ կիրառելուն և նյութերն արդյունավետ օգտագործելուն: Պրակտիկ-առարկայական գործունեությունը կրտսեր դպրոցականներին հնարավորություն կտա նախապատրաստվել հետագա աշխատանքին, տարբեր նյութերի հետ աշխատելու ձևերին, դաստիարակել «նյութի յուրօրինակ զգացողություն», առանց որի անհնար է ազատ, գեղարվեստական-ստեղծագործական գործունեությունը: Տարրական դասարաններում ուսումնասիրության առանցքը նյութերն են, դրանց հատկությունների ուսումնասիրությունը, մշակման եղանակների տիրապետումը /պարզից բարդ սկզբունքով/: Առաջին և երկրորդ դասարաններում ուսումնասիրությունների հիմքը թուղթն է, բնական և արհեստական նյութերը: Մանածագործական նյութերով աշխատանքը սկսվում է երրորդ դասարանից, երբ երեխաներն արդեն նյութերի հետ աշխատելու բավականաչափ փորձ կունենան և կկարողանան անվտանգ աշխատել տարբեր տեսակի ասեղներով, մկրատներով: Աշխատանքի տեսակների ընտրությունն էլ նույն սկզբունքով է կատարվում՝ ապլիկացիա, խճանկար, օրիգամի /հարթ, ապա տարածական/, մոդուլային օրիգամի, թելանկար, կոմպոզիցիա և այլն: Չորրորդ դասարանից սկսվում է ծանոթացումը գծագրական պարզ մոդելների, հայկական գեղարվեստական արհեստներին, դեկորատիվ-կիրառական արվեստին, հայկական զարդանախշերի իմաստային ու գաղափարական բովանդակությանը, գեղարվեստական շինվածքներ նախագծելու պարզագույն տեխնիկաներին:

Միջին դպրոցում

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման մոտ 70% հատկացվում է գործնական, իսկ 30%-ը՝ տեսական պարապմունքներին:

Հիմնական դպրոցում 5-7-րդ դասարաններում տեխնոլոգիա առարկայի պարապմունքներին դասարանը կիսվում է երկու խմբի: Ծրագիրը ներկայացվում է ըստ մոդուլների:

Հաշվի առնելով, առկա հնարավորությունները և ուսուցչի համապատասխան մասնագիտական որակավորումը, առաջարկվում է ծրագրով նախատեսված նյութերի գեղարվեստական մշակման բաժնում նշված արհեստները փոխարինել ծրագրում ներկայացված մոդուլներով կամ այլ արհեստներով: Տվյալ դեպքում ուսուցիչը կազմում է ծրագիր, որը ներկայացնում է համապատասխան առարկայական մեթոդ միավորման հաստատմանը: «Տեխնոլոգիա» առարկայի ծրագիրը միջին դպրոցում ապահովում է սովորողների տեխնոլոգիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, սովորեցնում է կողմնորոշվել բարդ իրավիճակներում:

Դրանց թվին կարելի է դասել ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունը, աշխատանքի կատարմանը ստեղծագործաբար մոտեցումը, տնտեսագիտական հաշվարկների, տրված առաջադրանքը կատարելու համար արդյունավետ ճանապարհների ընտրությունը: Այս խնդիրները հիմնականում լուծվում են նյութերից շինվածքներ պատրաստելիս, էլեկտրական շղթաներ և տեխնիկական մոդելներ հավաքելիս, գործիքների հետ աշխատելիս և խոհարարական աշխատանքներ կատարելիս:

Ծրագրում կարևոր տեղ է հատկացվում սովորողներին գծագրա-գրաֆիկական աշխատանքների նախապատրաստմանը: Տեսական գիտելիքներ հաղորդելիս աշակերտներին ծանոթացնում են արտադրության մեջ կոնստրուկտորական փաստաթղթերի միասնական համակարգի կիրառմանը, էսքիզներ, գծանկարներ, գծագրեր կարդալու և կազմելու մեթոդներին:

Գործնական խնդիրների կատարման և ճարտարագիտական աշխարհայացքի ընդլայնման համար տրվում են տեխնոլոգիական, տնտեսագիտական, գեղարվեստական կոնստրուկտավորմանը (դիզայն) վերաբերյալ գիտելիքներ: Աշակերտների գեղագիտական դաստիարակությունն իրականանում է <<ժողովրդական արհեստների>> դասաժամերին, ուշադրություն է դարձվում նաև բնապահպանությանը վերաբերող հարցերին: Ծրագիրն ընդգրկում է նաև մեքենագիտության տարրեր, էլեկտրատեխնիկա, ռադիոէլեկտրոնիկա, թվային էլեկտրոնիկա բաժինները: Գլխավոր նպատակն է կարևորել էլեկտրական էներգիայի դերը:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման դասաժամերին անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել աշխատանքային անվտանգության տեխնիկայի կանոնների, հակահրդեհային միջոցների և աշխատանքի հիգիենայի ուսումնանսիրմանն ու պահպանմանը: Այս գիտելիքները տրվում են ծրագրի յուրաքանչյուր թեմայում:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը միջին դպրոցում նպատակաուղղված է ընդլայնելու աշակերտների գիտելիքները գիտության նվաճումների, բնության, մարդու և հասարակության վրա տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցության մասին, ձևավորելու ձեռնարկատիրական նախնական գիտելիքներ, իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողություններ: Այն նաև նպաստում է սովորողների մասնագիտական կողմնորոշմանը՝ տարբեր արհեստներին ծանոթացնելու միջոցով:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Տարրական դպրոցում: <<Տեխնոլոգիա>> առարկայի չափորոշում ձևավորված են հետոյալ արժեքային համակարգերը:

- Մարդու աշխատանքային արդյունավետ գործունեության նշանակության մասին:
- Շրջակա միջավայրի և բնության ներդաշնակ կապի մասին:
- Աշխատանքի կազմակերպման և դրա կուլտուրայի մասին:
- Գեղագիտական և անվտանգ աշխատանքի մասին:
- Նյութերի մշակման եղանակների, դրանց կառուցվածքային և դեկորատիվ գեղարվեստական իմաստի, մշակման համար համապատասխան ձեռքի գործիքների օգտագործման մասին:
- Նախագծատեխնոլոգիական փաստաթղթերի մասին:
- Հաղորդակցման և կազմակերպչական հատկությունների, աշխատասիրության, նպատակասլացության, պատասխանատվության և մարդկանց նկատմամբ հարգալից վերաբերմունքի մասին:

Միջին դպրոցում: <<Տեխնոլոգիա>> առարկայի չափորոշում ձևավորված են հետևյալ արժեքային համակարգերը.

- տեխնոլոգիական գիտելիքների ձեռքբերում, սովորողների տարրաբնույթ տեխնոլոգիական գործունեության վրա հիմնված տեխնոլոգիական կուլտուրա:
- ընդհանուր աշխատանքային և սոցիալական հմտությունների ձեռքբերում, որն անհրաժեշտ է տեխնոլոգիական տեղեկատվությունը փնտրելու և օգտագործելու համար (նախագծման), աշխատանքի արդյունքներ ստանալու, տան, որոշակի սոցիալական և մասնագիտական պլաններ (իրագործելու), ճանաչողության զարգացում, տեխնիկական մտածողություն, տարածական երևակայություն, ինտելեկտուալ, ստեղծագործ, հաղորդակցական և կազմակերպչական հատկություններ, աշխատասիրության դաստիարակում, նպատակասլացություն, ձեռներեցություն, պատասխանատվություն սեփական գործունեության համար, մարդկանց նկատմամբ հարգալից վերաբերմունք:
- գործնական ինքնուրույն աշխատանքների կատարման ժամանակ պոլիտեխնիկական և տեխնոլոգիական գիտելիքների ու ունակությունների օգտագործմամբ փորձի ձեռք բերում:

ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Ուսուցչի մասնագիտական ոլորտներից մեկ էլեկտրոնային դասը ճիշտ պլանավորելն է, որը դասի արդյունավետության բարձրացման կարևոր գործոնն է: Պլանավորման համար թեմայի 25-30% հատկացվում է տեսական պարապմունքներին, իսկ 70-75% գործնական աշխատանքների կազմակերպմանը: Դասի ճիշտ պլանավորման համար անհրաժեշտ է դասի խնդիրների և նպատակների հստակ գիտակցումը:

Ակադեմիական նպատակներ: Ուսուցիչը պետք է հաստակացնի բովանդակային նպատակները: Ի՞նչ գիտելիքներ է ուզում հաղորդել աշակերտներին սովյալ դասի ընթացքում: Բովանդակային նպատակները աշակերտների մոտ գիտելիքների ձեռքբերումներն են:

Սոցիալական նպատակներ (հմտությունների ձևավորում): Դրանք կախված են առաջադրանքի կազմակերպման ձևից: Որքանով է այն ենթադրում փոխօգնության, համագործակցության անհրաժեշտություն: Սոցիալական հմտությունների ձևավորման, զարգացման նպատակը աշակերտների մոտ մյուսներին օգնելու և խմբի անդամներին խրախուսելու, արդյունավետ շփվելու, համագործակցելով խնդիրներ լուծելու հմտությունների ձեռքբերումն է: Ուսուցիչը մեկ դասի համար կարող է ընտրել մեկ կամ երկու հմտություն, որոնց ձևավորումը առավել հրատապ է համարում:

Ելնելով զարգացնող ուսուցման սկզբունքներից ուսուցիչը դասը պետք է պլանավորի այնպես, որ օգնի աշակերտին ինքնուրույնաբար ձեռք բերել գիտելիքներ, սովորել սովորի, որ ուսուցման ընթացքում ծանրաբեռնվածությունը ընկնի ոչ թե աշակերտի հիշողության այլ մտածողության վրա, որպեսզի ուսուցումը լինի ոչ թե վերարտադրողական, այլ ստեղծագործական գործունեություն:

Աշակերտները գիտելիքները ստանան ոչ թե պատրաստի ձևով (ուսուցչի հաղորդումից, դասագրքից), այլ ինքնուրույնաբար, որոնողական, հետազոտական կամ համագործակցային աշխատանքների միջոցով, որոնք աշակերտի մեջ հետաքրքրություն են առաջացնում, ձևավորում ուսման նկատմամբ դրական վերաբերմունք, նպաստում դժվարությունների հաղթահարմանը և խթանում ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Դասը պլանավորելիս ուսուցիչը պետք է նկատի ունենա ն՛ ներկա, և՛ հեռահար խնդիրների լուծմանը: Պլանավորումը չի կարող ընթանալ առանց ուսուցչի հստակ պատկերացումների սովորողների գիտելիքների, հմտությունների և մոտեցումների վերաբերյալ:

Ի՞նչ մասեր է ընդգրկում դասի պլանը

Պետական կրթակարգի առումով, այն պետք է սահմանի.

- Դասի հիմնախնդիրները
- Ուսումնառության փորձարկումները և վարժությունները
- Ուսուցչի դերը
- Ուսումնառության աղբյուրները
- Գնահատման ցուցանիշները

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դասի կառուցվածքը պայմանավորված է դասի տեսակի, ուսումնական նյութի բովանդակության, ուսումնական բազայի, դասասենյակի հագեցվածության և այլ գործոններից: Ներկայացնենք ակտիվ ուսումնառությանը և մտածողության զարգացմանը նպաստող դասի պլանավորման կառուցվածքի նմուշօրինակ

ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեմա-

Դասարան-

Տևողություն-

Ուսուցման մեթոդներ-

Ակադեմիական նպատակներ- գիտելիքներ

Սոցիալական նպատակներ- կարողությունների, հմտությունների ձևավորում

Արժեքային համակարգ- սովորողը ձեռք կբերի

Անհրաժեշտ նյութեր և միջոցներ.

- ✓ Դիդակտիկ նյութեր, պարագաներ
- ✓ Գրականություն, պաստառներ
- ✓ Նկարներ, վերատպումներ, համացանց

Ներածություն, կողմնորոշում- սովորողների ուշադրության կենտրոնացում այն նյութի վրա, որը ներկայացվելու է տվյալ դասին:

Դասի ընթացքը- ուսուցման գործընթացի փուլերը քայլ առ քայլ

Այսպիսով դասը կառուցվում է 3 փուլով.

1. Դասի սկիզբ- խթանում (5-7 րոպե)
2. Դասի հիմնական մաս- իմաստի ընկալում-բացատրություն (20-25 րոպե)
3. Դասի ավարտ- կշռադատում-ընդլայնում (7-10 րոպե)

Խթանում

Այս փուլի նպատակը, աշակերտների հետաքրքրությունը խթանելն է, խորհել նոր հաղորդվելիք թեմայի վերաբերյալ, վեր հանել այդ թեմայի վերաբերյալ իրենց

նախնական գիտելիքները, հարցեր տալ և սահմանել սովորելու կոնկրետ նպատակները:

Իմաստի ընկալում

Այս փուլի ընթացքում աշակերտները տեքստի, ուսուցչի հաղորդման կամ ուսումնական որևէ այլ միջոցներով ծանոթանում են նոր նյութին, և այդ ընթացքում նրանցից ակնհայտվում է նոր գաղափարները ներհյուսել արդեն գոյություն ունեցող պատկերացումների մեջ:

Կշռադատում

Ավարտվում է դասը կշռադատման փուլով, որի ընթացքում աշակերտները իրենց ունեցած պատկերացումների համատեքստում խորհում են սովորածի մասին, որպեսզի վերակառուցվեն գիտելիքները:

Ամփոփում

Ի՞նչ եզրակացությունների պետք է հանգել դասի ավարտին:
Որքանո՞վ են արդեն լուծված խնդիրները (2-3 բոպե)

Հագուստի կոնստրուկտավորում և մոդելավորում

Թեման- Գոգնոցի գծագրի կառուցում: Չափսերի գրանցում

Դասարան- 5-րդ

Դասի տեսակը- կոնքինացված դաս

Դասի տևողությունը- 6 դասաժամ

Աշխատանքի տեսակը- գույզերով

Ուսուցման մեթոդները- խոսքային բացատրություն, ցուցադրում, ցուցումներ, հրահանգներ, ինքնուրույն գործնական աշխատանք:

Ուսուցման միջոցներ- դասագիրք, աղյուսակ, քարտ-առաջադրանքներ, համակարգիչ:

Ուսուցման պարագաներ- սանտիմետրաժապավեն, աշխատանքային տետր, ժապավեն, գծագրական թուղթ, մատիտներ, քանոն, գործվածք:

Դիդակտիկ պարագաներ- գոգնոցի նմուշներ, ազգային տարազների վերատպումներ:

Միջառարկայական կապ- պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, կերպարվեստ:

Դասի նպատակը և խնդիրները:

Ուսուցանող

- Սովորեցնել չափսեր վերցնելու կանոնները:
- Ձևավորել մարմնակազմվածքից չափսեր վերցնելու հմտություններ:
- Ընդլայնել սովորողների պատկերացումները, գոգնոցի վերաբերյալ՝ ուսումնասիրելով պատմական նյութերում գոգնոցի ստեղծման պատմությունը, դերը և նշանակությունը:
- Համագործակցություն խմբային աշխատանքում:

Կազմակերպչական մաս

- Ստուգել աշակերտներին դասին պատրաստ լինելը: Նշել բացականերին:
- Անել հարցադրումներ, Վեր հանել թեմայի վերաբերյալ ունեցած գիտելիքները նյութագիտության, գործվածքների տեսակների, գոգնոցի պատմության և անհրաժեշտության վերաբերյալ:

- Հենվելով ուսումնասիրության ընթացքում ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների բազայի վրա, անցնել նոր թեմայի հաղորդման:

Հարցեր

- Ի՞նչ գործվածքներ ենք ուսումնասիրել:
- Այդ գործվածքները ի՞նչ հատկություններ ունեն:
- Ինչպիսի՞ գործվածքներ են անհրաժեշտ գոգնոց կարելու համար:
- Աշխատանքային հագուստը ի՞նչ հատկություններ պետք է ունենա:
- Ի՞նչ գիտեք գոգնոցի պատմության և անհրաժեշտության մասին:

Չափսեր վերցնելը.

Ուսուցիչ- գծագիր կառուցելու համար անհրաժեշտ է մարմնակազմվածքից չափսեր վերցնել: Չափսերը պետք է վերցնել ճշգրիտ, այլապես գծագիրը ճիշտ չի լինի և դրանով կարված հագուստը չի համապատասխանի մարմնակազմվածքին:

Բացատրել, թե ի՞նչպես պետք է վերացնել մարմնակազմվածքից չափսերը:

Չափսերը պետք է վերցնել սանտիմետրաժապավենով՝

- ✓ չափսերը վերցնում են մարմնին կիպ կպած հագուստի վրայից
- ✓ սանտիմետրը չպետք է թուլացնել կամ ձգել
- ✓ նա ում չափսերը վերցնում են, պետք է կանգնի ուղիղ, հանգիստ, ձեռքերը ներքև իջեցրած, ոտնաթաթերը հեռու, կրունկները իրար կպած
- ✓ գոտկատեղը որոշելու համար կապել գոտի
- ✓ բոլոր չափսերը վերցնում են աջ կողմից
- ✓ բոլոր չափսերը վերցնում են հերթականությամբ՝ սկզբից լայնության, ապա երկարության
- ✓ լայնության չափսերը պետք է գրել կեսը
- ✓ երկարության չափսերը պետք է գրել լրիվ

Չափսեր վերցնելը.

Յուրաքանչյուր աշակերտ պետք է կազմի իր անհատական չափսերի ցանց աղյուսակը: Չափսեր վերցնելու համար աշխատել զույգերով:

Մեկը վերցնում է չափսը, մյուսը աղյուսակում կատարում է գրանցումները:

Կառուցել գծագիրը: Ստանալ ձևանները: Տեղադրել գործվածքի վրա, ձևել, միացնել դետալները, չափափորձել, կարել, վերջնամշակել:

Ի մի բերել արդյունքները

Զրույց հարցադրումներով

- ✓ **Ո՞րոնք են չափսեր վերցնելու հիմնական կանոնները**
- ✓ **Ինչպիսի՞ չափսեր են անհրաժեշտ գոգնոցի գծագրի կառուցման համար**
- ✓ **Քան՞ի դետալից է կազմված գոգնոցը**

Շասի վերլուծություն

Անել անհրաժեշտ դիտողությունները:

Գնահատում

- ✓ Տեսական գիտելիքների գնահատում
- ✓ Գործնական աշխատանքների գնահատում

Տնային առաջադրանք

- ✓ Գունավորել զարդամոտիվներով հայկական տարազի գոգնոց

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գնահատումն ուսումնական գործընթացի արդյունավետության և արդյունքների բացահայտման միջոց է:

Գնահատումը գիտելիքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է: Սովորողին ուղղված գնահատականը պետք է վերաբերի նրա կոնկրետ գործողություններին, գործունեության արդյունքներին, խրախուսի, արձանագրի աճը, ուժեղ և թույլ կողմերը, հաջողություններն ու վրիպումները: Անհրաժեշտ է սովորողներին ներգրավել գնահատման պլանավորման մեջ՝ սովորեցնելով մշակել գնահատման չափանիշներ (սանդղակներ): Այդ դեպքում նախ՝ նրանք կսովորեն գնահատել, երկրորդ՝ կհիմանան, թե ինչ է պահանջվում իրենցից, երրորդ՝ կմեծանա պատասխանատվությունը: Գնահատման սանդղակը, որպես գնահատման չափանիշ, իրենից ներկայացնում է միավորների աղյուսակ և դրա յուրաքանչյուր միավորը որպես բնութագրող հատկանիշ: Տվյալ առաջադրանքի ուսումնական նպատակներից ելնելով, ուսուցիչն աշակերտներին ներկայացնում է գնահատման սանդղակները մշակված ցուցիչներով, որոնք սահմանում են գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակը:

Առածներ, ասացվածքներ, ասույթներ

Հայ ժողովրդի բանահյուսությունը չափազանց հարուստ է առածների և ասացվածքների ժանրատեսակի իմաստալից նմուշներով: Մեծ է նրանում բարոյադաստիարակչական և ճանաչողական արժեքը, այն օժտված է քիչ խոսքով՝ շատ բան ասելու բացառիկ ուժով: Որպեսզի աշակերտները ընկալեն առած-ասացվածքների, ասույթների իմաստը, խորհուրդը, <<համն ու հոտը>>, կարևոր է, որ դրանք հնչեն տեղին և ժամանակին:

Ստորև ներկայացնում ենք աշխատանքային դաստիարակության և ճանաչողական նշանակությամբ առանձնացող առած-ասացվածքներ, ասույթներ:

1. <<Ասողին լսող ա պետք>>
2. <<Մի ձեռը ծափ չի տա>>
3. <<Մի խելքը լավ ա, երկուսը՝ ավելի>>
4. <<Մեջք մեջքի տան՝ սարեր շուռ կտան>>
5. <<Մի ասա չեմ կարող, ասա չեմ ուզում>>
6. <<Ով ալարի, ոչ դալարի>>
7. <<Ով դատի, ով ուտի>>
8. <<Ով կարդա, նա մարդա>>
9. <<Ով աշխատի, նա կուտի>>
10. <<Ուրիշի հացով փոր չի կշտանա>>
11. <<Խոսքը գործի կեսն է>>
12. <<Խոսքը քամուն մի տուր>>
13. <<Խոսքը կտուրը մի գցիր>>
14. <<Խոսք կա, որ մի փութ մեղրով էլ կուլ չի գնա>>
15. <<Համբերությունը կյանք է>>
16. <<Շատ աշխատողին շալե՝ շապիկ>>
17. <<Ինչ ցանես, այն կհնձես>>
18. <<Չիմանալն ամոթ չէ, ամոթը չհարցնելն է>>
19. <<Շոր տուր շնորք տամ, հաց տուր ռանգ տամ>>
20. <<Քիթ սրբելու ժամանակ չունի>>
21. <<Ջուր մի ծեծիր>>
22. <<Ջուրը չտեսած՝ չեն բոբիկանա>>
23. <<Ծիծաղում է նա, ով վերջում է ծիծաղում>>
24. <<Յոթ անգամ չափիր, մեկ անգամ կտրիր>>
25. <<Ճտերն աշնանն են հաշվում>>

ԱՍՈՒՅԹՆԵՐ

<<Արհեստ ունեցիր մի եղիր նագուկ
Արհեստն է մարդուն ոսկե բիլագուկ>>:

Հովհաննես Շիրազ

<<Փորձը համարվում է իմաստության մայրը>>:

Լեոնարդո դա Վինչի

<<Աշխատանքը օգնում է կրթվելուն, կրթությունը օգնում է աշխատանքին>>:

<<Ապագան այսուհետ պատկանում է երկու տիպի մարդկանց՝ մտածող մարդուն
և աշխատող մարդուն>>:

Վ. Հյուգո

<<Աշխատանքը հայրն է բոլոր հաճույքների>>:

Դ. Դիդո

<<Գործը վարպետից է վախենում>>:

Ի. Կոխլով

<<Սովորեցնողը սովորում է կրկնակի>>:

Սենեկա

<<Իրական հարստությունը մարդու համար աշխատելու կարողությունն է>>:

Եզովպոս

<<Ուզում ես վարպետ դառնալ, հմտություններ ձեռք բեր մանկուց>>:

Շիլլեր

Առարկայի բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը հիմնվում է բնության մեջ, սոցիալական միջավայրում նյութի, էներգիայի, տեղեկատվության, առարկաների փոխակերպման և դրանք մարդուն ծառայեցնելու կոնկրետ գործընթացների տիրապետման վրա: Ուսուցման բովանդակությունը հիմնվում է սովորողների կրթական կարիքների, հետաքրքրությունների վրա:

«Տեխնոլոգիա» առարկայի հիմնական գաղափարները

«Տեխնոլոգիա» առարկայի ուսումնական ծրագիրը կառուցվում է 5 հիմնական գաղափարների վրա՝

1. Գրաֆիկա,
2. Նյութեր և կառուցվածքներ,
3. Գործընթացներ և արտադրություն,
4. Ձեռնարկատիրություն,
5. Տեխնոլոգիա և կյանք:

ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ		
1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ
Գրաֆիկա	Գծագրության հիմունքները	Գծագրական թղթերի ստանդարտ չափերը, գծագրական գործիքներ, մասշտաբ, գծեր, տառատեսակներ
		Երկրաչափական կառուցումներ
		Երկրաչափական պատկերների պրոյեկցիան
		Աքսոնոմետրիկ կառուցումներ
		Հատույթներ և այլ կառուցումներ
	Տեխնիկական գծագիր	Մեխանիկական մասեր
		Չափադրման հիմնական սկզբունքները
		Տեխնիկական գծագրերի պայմանական նշանները (մակերևույթի մաքրություն, ճշտության աստիճան, թույլտվածք և այլն)
		Միացման սիմվոլիկ պատկերումը, գծագրերում՝ եռակցում, պարուրակային և այլ միացումներ
		Հավաքական գծագիր
	Շինարարական գծագրություն	Շինարարական գծագրերի սիմվոլիկ պատկերումները, մասշտաբները
		Շինարարական գծագրի տեսակները (տեսք, հատույթ, հատակագիծ)

Նյութեր և կառուցվածքներ	Նյութեր և ռեսուրսներ	Համընդհանուր գործածվող նյութերի տեսակներ
		Նյութերի հատկությունները և դրանց փորձարկումները
		Կիրառական և դիզայներական աշխատանքների համար ճիշտ նյութերի և ռեսուրսների ընտրությունը
		Նյութերի և ռեսուրսների անթափոն գործածումը
Նյութերի մշակում	Նյութերի մշակման եղանակները՝ կտմամբ մշակում, միացում, հավաքում	Նյութերի մշակման ճիշտ եղանակի ընտրություն
		Պարզագույն մեխանիզմների տեսակները
		Տարբեր նպատակների համար ծառայող մեխանիզմների կառուցվածքներ
Կառուցվածքներ և մեխանիզմներ	Պարզագույն մեխանիզմների տեսակները	Տարբեր նպատակների համար ծառայող մեխանիզմների կառուցվածքներ
		Շարժման փոխանցման և ղեկավարման համար նախատեսված մեխանիզմների կիրառությունը
		Գործիքների և սարքավորումների անվտանգ շահագործումը
Գործընթացներ և արտադրություն	Գործիքներ և սարքավորումներ	Նախագծային լուծման համար անհրաժեշտ գործիքների և սարքավորումների ճիշտ ընտրություն

	Արտադրական գործընթաց	Տարբեր ոլորտների արտադրական գործընթացները
		Արտադրական գործընթացի ընտրության վրա ազդող գործոնները
		Արտադրական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ մասնագիտական հմտությունները
	Նախագծի կազմակերպում	Նախագծային աշխատանքի պլանավորում և քայլերի մշակում
		Համագործակցային խմբային աշխատանք՝ նախագծի շուրջը (պլանավորում, կազմակերպում, վերահսկում և բարելավում)
		Նախագծային փաստաթղթերի մշակում
Ավտոմատացման տարրեր	Մեխանիկական, էլեկտրական, պնևմատիկ, էլեկտրոնային վերահսկիչ համակարգեր	
	Ավտոմատացման վերահսկում	
Ձեռնարկատիրություն	Ձեռնարկատիրական գործունեություն	Բիզնես միջավայրեր՝ տնտեսական, տեխնոլոգիական, մշակութային և ֆիզիկական, սոցիալական, քաղաքական, իրավական
		Ֆինանսական բյուջետավորում (անձնական և ընկերություն) և հաշվետվություն
	Ռեսուրսների կառավարում	Ռեսուրսների պլանավորում
		Մարդկային ռեսուրսներ

	Շուկայավարում	Շուկայի հետազոտում
		Գովազդային արշավներ
		Հաճախորդների սպասարկման ծառայություններ
		Որակի ապահովում
Տեխնոլոգիա և կյանք	Առողջ սնունդ, սննդի պատրաստում	Սնունդ և սնուցում, սննդի խմբեր, դիետիկ նպատակներ և ուտելու սովորություններ
		Հիգիենա և անվտանգություն
		Սննդի պատրաստման և վերամշակման սկզբունքները
	Հագուստի նախագծում և մոդելավորում	Գործվածքների ընտրություն՝ դիզայնի և հագուստի ձևի հետ կապված
		Հագուստի ձևը և ձևանը
		Նորաձևության միտումները
	Կենցաղ և ընտանիք	Ընտանեկան հարաբերություններ
		Ընտանեկան ռեսուրսների կառավարում և բյուջետավորում
		Կենցաղային սարքեր
	Դիզայն և կիրառական արհեստներ	Դիզայնի հիմունքները
		Դիզայնի գործընթացը
		Սպրանքի դիզայն
Հագուստի դիզայն		
Ժողովրդական գեղարվեստական արհեստներ		

Առարկայի ուսուցման ընդհանրական վերջնարդյունքները

Առարկայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

1. Ճանաչել գծագրական ստանդարտները, գործիքները, գծերի տեսակները
2. Կիրառել մասշտաբ, գծագրել տարբեր երկրաչափական մարմիններ
3. Պրոյեկտել տարբեր եռաչափ պատկերները երեք հարթությունների վրա
4. Գծել տեխնիկական գծագիր և ձևավորել ստանդարտներին համապատասխան
5. Գծել շինարարական գծագիր և ձևավորել ստանդարտներին համապատասխան
6. Դասակարգել նյութերն ըստ իրենց հատկությունների և ծագման
7. Ուսումնասիրել և տարբերել տարբեր նյութերի ֆիզիկական հատկությունները
8. Ընտրել և օգտագործել համապատասխան նյութեր և ռեսուրսներ դիզայնայնական և նախագծային աշխատանքի համար
9. Հասկանալ, թե ինչ նշանակություն ունեն ռեսուրսների օգտագործումը և վերամշակումը մեր հասարակության կայուն զարգացման համար
10. Նախագծել և պատրաստել շինվածքներ մեզ շրջապատող նյութերով
11. Հասկանալ, որ տարբեր նյութերն ու ռեսուրսները մշակում են տարբեր կարիքների բավարարման համար:
12. Ընտրել և օգտագործել համապատասխան գործիքներ և սարքավորումներ նյութերի մշակման համար
13. Տիրապետել նյութերի մշակման եղանակներին
14. Տեղեկացված լինել նյութերի մշակման ընթացքում շրջակա միջավայրին հասցվող վնասները նվազագույնի հասցնելու անհրաժեշտության մասին
15. Տեղյակ լինել, որ տարբեր կառուցվածքներ և մեխանիզմներ կարող են իրականացնել տարբեր նախագծային գործառույթներ՝ տարբեր կարիքների բավարարման համար
16. Տեղյակ լինել գործիքներով անվտանգ աշխատելու կարևորության մասին
17. Օգտագործել գործիքներ, մեքենաներ կամ սարքավորումներ՝ տարբեր նյութերի, էներգիայի և տեղեկատվության մշակման համար
18. Հասկանալ, թե ինչպես ճիշտ օգտագործել ձեռքի գործիքները
19. Ընտրել և օգտագործել համապատասխան գործիքներ և սարքավորումներ նյութերի և տեղեկատվության հետ աշխատելու համար
20. Հասկանալ մի շարք նյութերի ձևավորման և մշակման գործընթացները
21. Տիրապետել նյութերի միացման, հավաքման և վերջնամշակման գործընթացներին
22. Գործածել գործիքներն ու սարքավորումները արտադրական տարբեր գործընթացներում
23. Համագործակցել ընկերների հետ նախագծի շրջանակներում, ինչպես նաև որոշումների կայացման, պլանավորման, կազմակերպման, վերահսկման և գնահատման ընթացքում
24. Գիտակցել աշխատանքի պլանավորման կարևորությունը՝ առաջադրված խնդիրների լուծման համար
25. Ճանաչել լույսի, ձայնի, էլեկտրականության և շարժման հետ կապված որոշ օրինաչափություններ և երևույթներ
26. Հասկանալ մեխանիկական, էլեկտրական և էլեկտրոնային գործիքների օգտագործումը կառավարման համակարգերում
27. Հասկանալ, թե ի՞նչ է ձեռնարկատիրական գործունեությունը, և ինչպե՞ս կարելի է իրականացնել այն Հայաստանի Հանրապետությունում

28. Տարբերել «Ֆիզիկական անձ», «իրավաբանական անձ» «անհատ ձեռնարկատեր» հասկացությունները
29. Տարբերել կազմակերպությունների հիմնական տեսակները /ՍՊԸ, ՓԲԸ և այլն/
30. Իմանալ արտադրության գործոնները
31. Գիտակցել և գնահատել աշխատանքային ռեսուրսների դերը
32. Գիտակցել և գնահատել կապիտալ ռեսուրսների դերը երկրի բարեկեցության համար
33. Գիտակցել և գնահատել բնական ռեսուրսների դերը:
34. Հասկանալ շուկայի հետազոտություն կատարելու անհրաժեշտությունը և իմանալ, թե ինչպես կարելի է պարզել այլոց կարիքները
35. Տեղյակ լինել, թե ինչպես պլանավորել և իրականացնել գովազդային արշավ
36. Տեղեկացված լինել առողջ սննդի կարևորությանը
37. Ձևավորել սննդի մշակման և պատրաստման հմտություններ
38. Ստեղծել գաղափարներ, մշակել նյութերը՝ կարիքներին համապատասխան պարզ ապրանքներ պատրաստելու համար
39. Նախագծել հագուստի պարզ տեսակներ
40. Հիմնական ձևանի փոփոխությամբ մոդելավորել հագուստի պարզ ձևերը
41. Տեղյակ լինել տեխնոլոգիաների կիրառմանը բնակարանի խնամքի գործում
42. Հասկանալ արտադրանքի դիզայն-նախագծի սկզբունքները
43. Պահպանել դիզայնի սկզբունքները
44. Մշակել ապրանքի /հագուստ, զարդ, կենցաղային առարկաներ և այլն/ դիզայն նախագիծ:
45. Տիրապետել հայկական ազգային գեղարվեստական արհեստներին

Ձեռնարկատիրական կրթություն

<<Տեխնոլոգիա>> առարկայի ձեռնարկում մատչելիորեն ներառված են ձեռնարկատիրական կրթության հետևյալ կարևոր բաժինների վերաբերյալ տեսական գիտելիքները՝ դասավանդման մեթոդները՝ ձեռներեց և ձեռներեցություն, բիզնես գաղափար, շուկայի հետազոտություն, մարկետինգ, բիզնես պլան և բիզնես էթիկա:

Եթե տեխնոլոգիան աշակերտներին օգնում է սովորել՝ ինչպես կարելի է սեփական ձեռքերով առարկաներ և իրեր պատրաստել, ապա ձեռնարկատիրական կրթության բաղադրիչը օգնում է նրանց հասկանալու՝ արդյոք այդ առարկան պիտանի է օգտագործման համար, արդյոք այն ունի պահանջարկ և կարո՞ղ է հետաքրքրել մարդկանց այնքան, որ նրանք պատրաստ լինեն այն գնելու, արդյո՞ք իրենք պատրաստելու ճիշտ առարկա են ընտրել, իսկ միգուցե պետք էր բոլորովին այլ, ավելի օգտակար առարկա կամ իր պատրաստել:

Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչի ներդրումը ենթադրում է, որ աշակերտը պետք է կարողանա հասկանալ և գնահատել իր պատրաստած առարկայի ապրանքային արժեքը: Նա պետք է հասկանա և կարողանա պատրաստել այնպիսի մի բան, որը կհետաքրքրի և անհրաժեշտ կլինի մարդկանց, կհամապատասխանի նրանց ճաշակին և ցանկություններին:

Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչը կնպաստի որպեսզի աշակերտները՝

- Մտածեն կադապարներից դուրս
- Մտածեն ստեղծագործաբար
- Մտածեն նոր ձևով, լինեն նորարար
- Դառնան ինքնավստահ
- Կարողանան կայացնել որոշումներ
- Ձեռք կբերեն կամային բարձր հատկանիշներ՝ նախաձեռնողականություն, համարձակություն, խիզախություն, ինքնուրույնություն, վճռականություն և սովորություն
- Կարողանան ներգրավվել թիմային աշխատանքում
- Կարողանան պլանավորել գործողությունները
- Ձեռք բերեն առաջնորդական հատկանիշներ
- Սովորել փող աշխատել
- Լինեն խելացի սպառողներ
- Լինեն պարկեշտ և խելացի իրենց գործունեության մեջ և առհասարակ կյանքում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդյունքում եկա այն համոզման, որ <<Տեխնոլոգիա>> առարկան բավականին հետաքրքիր և աշխատատար է:

<<Տեխնոլոգիա>> առարկայի ուսուցչի հիմնական դերը կայանում է նրանում, որ նա աշակերտներին զինի տեխնոլոգիական գիտելիքներով և հմտություններով, ուսուցանի տեխնոլոգիական մեքենաների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, սովորեցնի կողմնորոշվել բարդ իրավիճակներում, որոնք առաջանում են ժողովրդական շուկայական հարաբերությունների անցկացման ժամանակաշրջանում:

Սակայն առավել լավ արդյունքի համար անհրաժեշտ է.

- Ունենալ բավարար մանկավարժական գիտելիքներ, կարողանալ ճկուն կերպով պատասխանել աշակերտների հարցերին, ճիշտ կողմնորոշվել իրավիճակային դեպքերում
- Ճիշտ կառավարել ժամանակը, դասապրոցեսն արդյունավետ կազմակերպելու համար
- Ընտրել ճիշտ մեթոդ դասի արդյունավետությունը ապահովելու համար
- ՏՀՏ գործիքների օգնությամբ դասը դարձնել առավել հետաքրքիր, արդյունավետ
- Նոր նյութի մատուցման ժամանակ ՏՀՏ գործիքները օգնում են սովորողների ուշադրությունը գրավելու հարցում

Գրականության ցանկ

1. <<Տեխնոլոգիա>> առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր
Հեղինակներ՝ Ս. Հովսեփյան, Մ. Աղաջանյան, Մ. Բարսեղյան Երևան 2007թ.
2. <<Տեխնոլոգիա>> ուսուցչի ձեռնարկ 1-4 դասարաններ
Հեղինակներ Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան
Երևան Տիգրան Մեծ 2014թ.
3. <<Տեխնոլոգիա>> ուսուցչի ձեռնարկ 5-7 դասարաններ
Հեղինակներ Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան
Երևան Տիգրան Մեծ 2014թ.
4. <<Տեխնոլոգիա>> առարկայի 5-7-րդ դասարանների ուսուցչի մեթոդական
ձեռնարկ
Հեղինակ Ժ. Ավետիսյան 2014թ.
5. ՏԵԽՆՈԼՈԳԻԱ առարկայում ինտեգրվող <<ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ>> չափորոշիչ, ծրագիր, ուսուցչի ձեռնարկ 5-7-րդ
դասարաններ
Հեղինակներ Ա. Հովհաննիսյան, Ա. Մանուկյան, Կ. Պապիկյան: Երևան 2019թ.